



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ

N 52-Ա

05 փետրվարի 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՆՉԵՎ 8, 10, 12, 14  
ԵՎ 16 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ  
ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, «Մանկապատանեկան սպորտի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 16-րդ  
հոդվածի պահանջներով

**որոշում եմ՝**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 8, 10, 12, 14 և 16  
տարեկան պատանիների շախմատի 2025 թվականի մարզային առաջնության  
կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 8, 10, 12, 14 և 16  
տարեկան պատանիների շախմատի 2025 թվականի մարզային առաջնության  
կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 8, 10, 12, 14 և 16  
տարեկան պատանիների շախմատի 2025 թվականի մարզային առաջնության  
տարածքային և մարզային փուլերի անցկացման մրցավարական հանձնաժողովի  
կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի Մարզպետի աշխատակազմի  
առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Լուսինե  
Վարդանյանին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 8, 10, 12, 14 և 16

մարզային փուլի անցկացման օրը համապատասխան հաստատությունում ապահովել  
բժշկի ներկայությունը:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի  
անձնակազմի կառավարման, վիճակագրության և հասարակայնության հետ  
կապերի վարչության պետ Մարինե Գյարգոյանին՝ միջոցառման անցկացման  
գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման առաքումը մարզի  
համայնքներ:

X 

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ



ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ  
ք. Գավառ

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 8, 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2025 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի

- Զազյան Կարեն - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/
- Հարությունյան Վանիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ
- Վարդանյան Լուսինե - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
- Շահբազյան Հասմիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
- Չարվադարյան Գեղամ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
- Հայրապետյան Մերուժան - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի շախմատի ակադեմիայի ներկայացուցիչ /համաձայնությամբ/
- Գասպարյան Ալիտա - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնակատար

Ստորագրող  
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ  
2201650098



2025-02-06 09:22:57 GMT+4  
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 8, 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2025 թվականի մարզային առաջնության**

**1. ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 8, 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2025 թվականի մարզային առաջնության /այսուհետ՝ Առաջնություն/ նպատակն ու խնդիրներն են՝

**նպատել**

- դպրոցականների շրջանում շախմատ մարզաձևի մասսայական զարգացմանը
- արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների բարելավմանը
- պատանի շախմատիստների մարզական կատարելագործման ապահովմանը
- Հայաստանի պատանիների շախմատի առաջնության կիսաեզրափակիչ մրցումներին մասնակցության ապահովմանը:

**2. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԵԿՎԱՐՈՒՄԸ**

Առաջնության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը: Տարածքային փուլի մրցումները կազմակերպում և անցկացնում են մարզում գործող Հայաստանի շախմատի ակադեմիայի մասնաճյուղերի պատասխանատուները:

**3. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ , ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Առաջնությունը կանցկացվի երկու փուլերով՝ համայնքային և մարզային: Համայնքային փուլի մրցումները կանցկացվեն 2025 թվականի փետրվարի 15-24-ը, իսկ մարզային փուլի մրցումները՝ 2024 թվականի մարտի 1-ին, 2-ին և 9-ին Գավառի Պ.Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոցում: Մրցումների սկիզբը ժամը 10:30-ին:

**4. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Առաջնության համայնքային փուլը կանցկացնեն Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի, Սևանի, Ճամբարակի, Մարտունու, Սարուխանի, Վարդենիսի և Վարդենիկի մասնաճյուղերը: Համայնքային փուլի մրցումների արդյունքում ձևավորված հավաքական թիմերը կմասնակցեն առաջնության մարզային փուլին: Թիմերն ըստ տարիքային խմբերի ձևավորվում են հետևյալ համամասնությամբ՝ մինչև 8 տարեկան՝ 1 տղա, մինչև 10 տարեկաններ՝ 3 տղա, մինչև 12 տարեկաններ՝ 3 տղա, մինչև 14 տարեկաններ՝ 3 տղա, մինչև 16 տարեկաններ՝ 2 տղա և մեկ մրցավար: Ընդ որում՝ մինչ 10 տարեկան պատանիների մրցաշարում մասնակցության իրավունք ունեն առնվազն 3-րդ կարգ ունեցող, մինչ 12, 14 և 16 տարեկան պատանիների մրցաշարում՝ առնվազն 2-րդ կարգ ունեցող շախմատիստները: Թիմի ընդհանուր կազմը՝ 13 մասնակից:

Առաջնությունը կանցկացվի՝ մինչև 10 և 12 տարեկանների տարիքային խմբում շվեյցարական մրցակարգով, մյուս տարիքային խմբերում՝ շրջանաձև: Առաջնությունն անհատական է: Այն կանցկացվի ՖԻԴԵ-ի կանոնակարգի համաձայն՝ դասական շախմատի կանոններով: Խաղացողին յուրաքանչյուր քայլի համար տրվում է լրացուցիչ 5 վրկ.: Յուրաքանչյուր թիմ պարտավոր է ապահովել իր մասնակիցների թվի կեսի չափով շախմատներ և ժամացույցներ: Մարզային փուլի մրցումները կազմակերպում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը, իսկ առաջնությունն անցկացնում և արդյունքներն ամփոփում է մրցավարական հանձնաժողովը:

### 5. ԾԱԽՍԵՐԸ

Պատանի շախմատիստների գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ և ճանապարհածախս) հոգում են գործուղող համայնքները:

### 6. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Մարզային առաջնությունում՝ յուրաքանչյուր տարիքային խմբում, 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված շախմատիստները կպարգևատրվեն հավաստագրերով և հուշանվերներով:

### 7. ՀԱՅՏԵՐԸ

Առաջնության համայնքային փուլի հայտերը պետք է ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող Հայաստանի շախմատի ակադեմիայի մասնաճյուղեր: Մարզային փուլի մասնակցության անվանական հայտերը ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն ներկայացնել մինչև մարտի 1-ը:

Ստորագրող  
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ  
2201650098

2025-02-06 09:26:48 GMT+4  
Հավաստված է էԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N3

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի  
2025թ. փետրվարի 5-ի  
N 52-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 8, 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2025 թվականի տարածքային և մարզային փուլերի անցկացման մրցավարական հանձնաժողովի

- Հայրապետյան Մերուժան - Հայաստանի շախմատի ակադեմիայի ներկայացուցիչ /գլխավոր մրցավար, համաձայնությամբ /
- Սարգսյան Կարո - Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի մասնաճյուղի մարզիչ /քարտուղար, համաձայնությամբ/
- Վարդանյան Աշոտ - Հայաստանի շախմատի ակադեմիայի Սևանի մասնաճյուղի մարզիչ / համաձայնությամբ /
- Պետրոսյան Մարգարիտ - Հայաստանի շախմատի ակադեմիայի Վարդենիսի մասնաճյուղի մարզիչ /համաձայնությամբ /
- Մարտիրոսյան Գարիկ - Հայաստանի շախմատի ակադեմիայի Ճամբարակի մասնաճյուղի մարզիչ /համաձայնությամբ /
- Հայրապետյան Արամայիս - Հայաստանի շախմատի ակադեմիայի Մարտունու մասնաճյուղի մարզիչ / համաձայնությամբ /
- Արզումանյան Սամվել - Հայաստանի շախմատի ակադեմիայի Վարդենիկի մասնաճյուղի մարզիչ / համաձայնությամբ/
- Թորոյան Գնել - Հայաստանի շախմատի ակադեմիայի Սարուխանի մասնաճյուղի մարզիչ / համաձայնությամբ /

Ստորագրող  
ՄԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ  
2201650098



2025-02-06 09:28:44 GMT+4  
Հավաստված է էԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՄԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ